


ՀԱՍՏԻ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. BuIbulian (Egypte) LE CAIRE



ԲԱՃԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Subscription rates: 40 Եգ. ողբ, 20, 12 Եգ.

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Ք

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Չ Ո Ր Ե Ք Ե Ա Ր Թ Ի Օ Ր Ե Ր Ը

Ապագիկ բաժանորդագրութիւն չի՝ ընդունուիր :

Մանուկումները մասնաւոր պայմաններով կ'ընդունուին :

ՌԻԻՏ | ՏՆՕՐԷՆ - ԽՄՐԱԳԻՐ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ | Արժանաչ եզրիպատկան Կառավարութեան | ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԻՏ Ս. ՊԻՆԼՊԻՆԵԱՆ | ՌԻԻՏ

ՊԱՏԱՍԽԱՆ ԵՐ

ԱՂԳ . ԵՐԿՍԵՌՎԱՐԹԱՐԱՆԻՆ ՇՈՒՐՁԸ (Շար . նախորդ . թիւէն և վերջ)

Թողունք ուսուցչուհիներն և ուսուցիչները, անդին ուսանողներն ու ուսանողուհիներն ալ կան : 14 - 18 տարեկան մանչեր և աղջիկներ, իրենց այն մատաղ տարիքին մէջ երբ ամենէն աւելի են թակայ են ֆիզիքայէս պրոպագանդայի, չեմ կարծեր թէ պէտք եղած լըրթեամբ կարենան հետեւիլ իրենց դասերուն, երբ ամէն օր մի և նոյն դասարանին մէջ, միևնոյն նստարաններուն վրայ, միևնոյն ժամուն իրարու կը մօտենան :

Արդէն մեր տուններու մէջ, մեր ընտանեկան նիստ ու կացին մէջ այնքան անվերապահ կը գտնուինք մանուկներու հանդէպ որ անոնք շատ բան կը լսեն շատ բան կը տեսնեն, ուրեմն ջանանք որ գէթ անոնք գպրոցի սեմէն ներս կարելի եղածին չափ մաքուր ու անբասիր կեանքով մը բողբոսն իրենց ուսանողական շրջանը :

Որտե՞ր հարցնէի ուրեմն թէ ի՞նչ պէտք կայ խառն դաստիարակութեան : Միթէ վարժարանի ներկայ պիտեմէն կարելի չէ՞ ունենալ Տրնորէնուհի մը և այնպիսի ուսուցչուհիներ որոնք պէտք չի տեսնեն ամեն օր իրենց շարան շարան ուսանողուհիներով զարդարելու մանչերու դարանները : Կարելի չէ՞ հաստատուն դամբելով դամբել այն միջնադուր որ կը միացնէ երկու վարժարանները : Կարելի չէ՞ արդեօք մեր ուսումնասէր տիկիներէն և օրիորդներէն կազմել խնամակալուհի մարմին մը, որ կատարէ աղջկանց վարժարանին մէջ այն դերը, ինչ որ կընէ Հոգաբարձութիւնը կամ ուսումնական մարմին մը մանչերու վարժարանին մէջ :

մակ անոր արժէքը քիչ թէ շատ կը գնահատուի մեր հասարակութեան կողմէ : Սակայն այս շարժումը դեռ իր բաղձացուած վիճակին մէջ չի գտնուիր դժբախտաբար : Անշուշտ նպատակ չունիմ երբէք Արշալոյսի ընթերցողներուն, երկար ուսումնասիրութիւն մը հրամայեւ մարմնամարզի աւագ կարեւորութիւնը շեշտելով՝ այլ պիտի բաւականանամ հակիրճ կերպով ծանրանալ խաղի երեք գլխաւոր նպատակներուն վրայ զոր վերջերս Ամերիկեան թերթեր շատ լաւ կերպով կը ներկայացնէին զանոնք արդի լաւագոյն բնախօսներուն և հոգեբաններուն համոզման յենով «Առաջին» Մարմնամարզը մարմնոյն մէջ մթերուած ջղային աւելորդ ոյժերը կ'անհետացնէ այնպիսի կերպով մը որ ֆլասակար չըլլալէ զատ պահանջուած մարզանքը կուտայ մկաններուն : Երկրորդ՝ անոր պաշտօնն է զարգացնել անհատին մէջ այնպիսի յատկութիւններ ու կարողութիւններ որ յետոյ կեանքի լուրջ զբաղումներուն մէջ պիտի նպաստեն խաղացողին յաջողութեանը : Եւ երրորդ՝ խաղը նպատակ ունի հաճելի պարագայներու շնորհիւ մտաւոր հանգիստ հայթայթել անհատին :

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԸ

ԱՄԵՆԱՄԵՆ ԱՂԳԱԿ ՄԸ Ե Ա Ռ Ա Ջ Գ Ի Մ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ներկայիս՝ Անկիւ - Սաքսոն ժողովուրդները որոնք ֆիզիքական, ընկերային ու բարոյական տեսակէտով գերազանցողէն կարեւորագոյն տեղ մը կը գրաւեն քաղաքակրթութեան լայն արահետին վրայ, ամենագլխաւոր պատճառը ոչ այլ ինչ է այլ եթէ մարմնամարզի համար անոնց ընծայած կարեւորութիւնը և խաղի հանդէպ ցոյց տուած բուռն ու անզուսպ սէրերնին է :

Անգլիոյ և Ամերիկայի մէջ մարմնամարզի ակումբները գրեթէ հասարակաց վայրերու տեղ կը ծառայեն որոնք ապահովաբար հզօր ծառայութիւն մը կը մատուցանեն և այս խաղերը կը ներգործեն անոնց ազգային նկարագրին վրայ, անյողողող և աննկուն նկարագիր մը դարձնելով անոնց մէջ : Դեռ վերջերս էր որ Պրուքլինի մէջ տեղի ունեցաւ մարմնամարզի համաժողով մը ուր ներկայ էին Անկիւ - Սաքսոն աշխարհին զօրաւոր ու անյաղթ չամ :

բերնները իրենց հոյակապ մարմինները ցուցադրած :

Աւելորդ է խօսիլ թէ մեզի նման ֆիզիքայէս տկար ազգ մը որքան պէտք ունի մարմնական զարգացման : Այստեղ յայտնուած է յառաջդիմութեան դասին պիտի տայ այսուհետեւ այն անհատներուն և ազգերուն միայն որոնք ամենէն աւելի կը զարգանան ֆիզիքով :

Մեր դպրոցներուն մէջ մարմնամարզը բոլոր ուսումներէն աւելի բարձր ու գերիվեր ըլլալու է : Պէտք է հայ ծնողքը բոլորովին թօթափէ միջնադարեան այն կոյր հաւատքը և Արևելեան մզկոտած այն գաղափարը թէ մարմնամարզը ճան պաշտութիւն է :

Պատանին, երիտասարդը, չափահասը պէտք է առաջին տեղը տան մարմնամարզի եթէ կուզեն մըշակել իրենց՝ մէջ հզօրագոյն ազգակը : Ինչպէս Վարմնամարզական խաղերը պէտք է ընդհանրացնել ու ժողովրդականացնել մեր մէջ, պէտք է նիւթապէս ու բարոյապէս քայալերել այն թերթերը, ակումբները, անհատական ձեռնարկները որոնք այս գաղափարին իրականացման համար բոլորանուէր ճիգեր կը թափեն : Եւ ահա այն ատենն է որ մենք պիտի կարենանք իբր ֆիզիքայէս զարգացած ազգ մը ապրիլ քաղաքակրթութեան արահետին վերայ և մեր Ազգ. նեղ ու հոգեխռով պարագաներուն տակ նախնի խաղի և մարմնամարզի սիրահար հոռովմէացիներուն պէս պիտի կարենանք կուշի բարձրագոյն « Խաղեր տուէ՛ք մեզի » :

Յ. Հ. ԹԵՂԵՆՅԱՆ

Գրահիտէ

ԻՍԿԱՆՈՒԹՅՈՒՄ

— 0 —

Աղէքսանդրիոյ և Գաւառներու համար գործակալներու պէտքը կայ : Բախտը կրնան գիտել « Արշալոյս » ի խմբագրութեան հասցէին :

Ն. Վ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄԵԿ ՆԱՄԱԿԸ

4004

« Ազատաստ » եւ կ'արտատպէ իբր օգտուան, Ն. Վ. Պօղոս Նուպար փաշայի « Թայմը » լրագրին ուղղած սոյն նամակը, հետեւեալը հաւատարմութեամբ պարտականութիւններուն :

« Պարո՛ն Տնօրէն, »

« Մտաւորապէս մէկ տարի առաջ, երբ Հայկական Բարենորոգումներու խնդիրն սկսած էր դարձնուիլ Եւրոպայի առջեւ զբոսիլ, դուք նամակ մը ստացաք՝ զոր ձեզի ուղղած էի, խնդրելով իր իսկութեան մէջ պարզելու, ինչպէս նաեւ ճշդելու համար թրքահայոց պահանջումներուն բնոյթը, որոնց դատին պաշտպանութիւնը ստանձնած էի : Հերքելով այն աւելի կամ նուազ երեւակայական նպատակներն որոնք կը վերագրէին իրենց, բացարձակ կերպով յայտարարեցի թէ հայկական նահանգներու ժողովուրդները, մերթելով անշատման կամ ինքնամարտութեան ամէն մտածում, կ'ուզէին միայն օսմանցիներ մնալ, կը բաւէ որ Պերլինի դաշնագրով պայմանաւորուած

բարենորոգումներու գործադրութեամբ վերջ մը տրուէր աւազակային արարքներու, սպանութիւններու եւ հողային գրաւումներու, որոնց ենթակայ էին երկար տարիներէ ի վեր, եւ այս կերպով երաշխաւորուէին ապահովութիւնը ու արդարութիւնը, որոնք միայն կրնային թոյլ տալ իրենց աշխատիլ եւ ապրիլ խաղաղօրէն :

« Այսօր որ, երկար ու աշխատալից բանակցութիւններէ ետքը, համաձայնութիւն մը կնքուեցաւ Պետութեանց եւ Բ. Դրան միջեւ, եւ այնքան երկար ատենէ ի վեր եւ անձկութեամբ սպասուած բարենորոգումները պիտի իրականանան, թոյլ կուտա՞ք ինձի, Պարոն Տնօրէն, « Թայմը » ի միջոցով յայտնելու այն զգացումները, որոնցմով բոլոր հայերը տողորուած են, մտածելով որ նոր դարաշրջան մը պիտի բացուի այս զբոսազգ ժողովուրդներուն համար :

« Կ'ուզէի յայտնել մեր ամբողջ ընտրահայարտութիւնը Պետութիւններուն որոնք Ռուսիոյ վեհաժողովին նախաձեռնութեան վրայ ձեռք առին մեր դատը, եւ Ն. Վ. Սուլթանին կառավարութեան որ ընդունելով հայոց ուղղամտութիւնն ու իրենց համեստ պահանջներուն օրինակներով ինքնապատեալ կանխաճառք եւ քաղաքական բարձր նշանակութիւն ունեցող ընթացքով մը միեւնոյն ժամանակ վանեց վտանգ մը, որ կայսրութեան գոյութեան իսկ կը սպառնար եւ ազատեց արեւելեան նահանգներու ժողովուրդները՝ երկար ատենէ ի վեր անոնց կրած անհանդուրժելի եւ անիրաւ տառապանքներէն :

« Պէտք չէ միայն որ մենք ուրախանանք, որովհետեւ մեր բարենորոգումներուն խնդիրը, ինչպէս միշտ յայտարարեցի, միայն մեզ չէր որ կը շահագրգռէր : Անիկա առած էր եւրոպական շահու ընդմէջ մը ա՛յն օրէն որ հասկըցուեցաւ թէ առանց մեր բարենորոգումներուն, Ասիական Թուրքիոյ հողային ամբողջութեան պահպանումը վերանայի տակ պիտի ըլլար : Այս պատահականութիւնն այսօր բարեբախտաբար հետացուած է եթէ Բ. Դրան ամէն միջոցներով նպաստաւորէր բարենորոգմանց ուղղամտ եւ անթերի գործադրութիւնը : Տեղի կայ ուրեմն շնորհաւորելու Պետութիւնները, որ անհերքելի համբարաշխութեամբ, — այն օրէն սկսեալ ուր համաձայնութիւն մը գոյացաւ իրենց մէջ — յաջողեցան գործնական արդիւնք մը ձեռք բերել, որուն կարեւորութիւնն ընդունելով Եւրոպայի խաղաղութեան մասին, չափազանցութիւն մը գործուած չպիտի ըլլայ : Պէտք է յուսալ որ Պետութիւնք բարենորոգման գործադրութեան պիտի հետեւին, գործելու ներդաշնակութեան, համբարաշխութեան, միեւնոյն ողիով եւ պիտի ապահովեն աւոր յաջողութիւնը :

« Պետութիւնները բոլոր գոհացումները տուին Թուրքիոյ՝ Բ. Դրան զիւրազգածութիւնը չի վերաւորելու համար : Այսպէս, անոնք, ետ կենալով բոլոր նահանգները մէկ նահանգի վերածեցէ, ընդունեցին երկու մասերու բաժնել զանոնք, ինչպէս կը պահանջէր Բ. Դրանը, եւ միւս կողմէ, եւրոպացի մասնաւոր պաշտօնականներու գործադրելիք իսկական հակակշիռը, որ հիմն էր մեր պահանջներուն, մէկտէր թողուեցաւ :

« Բ. Դրան ուրեմն կատարեալ գոհացում ձեռք բերաւ այս եւ ուրիշ կէտերու վրայ, որոնց մասնաւոր կարեւորութիւն մը կ'ընծայէր, եւ մենք ուրախ ենք որ զիւրաքաղութիւնը կըրցաւ գտնել լուծում մը՝ բոլոր շահերը նկատի առնելով, որ չի վտանգէ բարենորոգումներու ո՛չ գործադրութիւնը, ո՛չ ալ արդիւնաւորութիւնը :

« Այժմ կը մնայ միայն իրականացնել զանոնք. եւ ես ներքին համոզումն ունիմ թէ Բ. Դրանը, նոյնքան

չափազգողուած որքան Հայերը, ատոր պիտի աշխատի ազգուօրէն : Որովհետեւ ոչ ոք պիտի կարենար տարակուսիլ թէ բարենորոգմանց անկեղծ, կատարեալ եւ անվերապահ գործադրումով մըն է միայն որ այլեւս Հայկական Խնդիր գոյութիւն չպիտի ունենայ : Արդարեւ անոնց գործադրութեան գրեւորվը. ապահովութիւնն ու արդարութիւնն պիտի վերահաստատուին, բնական հարստութիւնները պիտի օգտագործուին, եւ տնտեսական զարգացումը պիտի ապահովուի : Ամբողջութիւն մըն է ասիկա գործունէութեանց եւ աղքատութեանց, որ կը քննադատուի, եւ որ կայսրութեան ի սպաս կը դրուին, մէկ խօսքով Թուրքիոյ վերականգնումն է, որուն համար Հայերը, իբր ուղղամտ հպատակներ եւ լաւ հայրենասէրներ, պիտի աշխատին իրենց բովանդակ իմացականութիւններովն եւ բոլոր ուժովը :

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Ն ա ի ս գ ա ն

Հայկական Պատմա-Գրական

Բարիք, 16 Փետր 1914

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԱՂԲԱՏԱՆԻ ԱՄԻՆ

Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Կիրակի օրը, 8 Մարտ, Ազգային Առաջնորդարանի ժողովարարահին մէջ տեղի ունեցաւ, Գահիրէի Հայ կական Աղքատախնամ Ընկերութեան անցեալ կիրակիներէն յետագուած և շարունակելիութիւնը որոշուած Ընդհ. Ժողովը :

Օրակարգը մասնաւոր հրատարակութիւններով ծանուցուած էր արդէն հին և նոր ընկերներուն . . .

Մեծ. Տիար Հայկ Ինայէթեան կ'ատենապետէր Ընդհ. Ժողովին, որուն անդամներուն թիւը՝ Առաջնորդարանի սրահը անբաւական ըլլալու չափ աճած էր այս վերջին անգամը, չը գիտցուիր ինչ մոգական գաւազանի մը հմայքներուն ներքեւ . . .

Ատենադպրոց՝ Տիար Կարապետ Գէշեան, բաւական ուշ եկաւ իր հրաւիրեալները պատուասիրելու համար :

Օրակարգի մէկ երկու խնդիրները նախորդ կիրակիներու գումարումներուն մէջ կարգադրուած ըլլալով արդէն՝ Ընդհ. Ժողովը անցաւ Գահիրէի մասնախումբի տեղեկագրին, որ կուշտ ու կուռ հարցեր երեւան կը բերէր իր մանրակրկիտ քննութեանց արդիւնքովը : Գահիրէի Մասնախումբի անդամներն էին, Տիարք Գէորգ Թիրպէտեան, Մկրտիչ Մանսուրեան և Պ. Նաթանեան :

Տեղեկագրին ընթերցումէն յետոյ, անոր պարունակութիւնները վիճարանութեան ղեկավար, Ատենապետ Գէշեանին մի առ մի լուսաբանեց թէ՛ ինչո՞ւ Աղքատախնամ երբեմն պարագաներու մէջ ստիպուած է բացառիկ նպատակներ ընել, իրեն ներկայացող նպատակներէն ինչն էր անհրաժեշտը և սրբուած լուսաբանութիւններէն այն համոզումը գոյացաւ թէ՛ հրաժարեալ Գործադիր Ժողովը բարեօր պաշտօնավարութիւն մը ունեցած է և Իրաւանի ատենապետ Գէշեանին չը

նորհակալութեան քուէ առաջարկեց որ միաձայնութեամբ ընդունուելով արձանագրուեցաւ :

Օրակարգի խնդիրներէն գուրս թէ՛ Ընդհ. Ժողովը Գործադիր Ժողովով ընտրութեան ձեռնարկուելէ յառաջ Տիար Մարգիս Էփտահար խօսք առնելով պահանջեց իր մէկ դիտողագիրը կարգաւ, որը կը վերաբերէր նախորդ կիրակիի Ընդհ. Ժողովոյ գումարումին մէջ իրեն համար և ի բացակայութեան պարսաւանաց ըլլալէ տրուած ըլլալուն և վերաբընուութիւն պահանջեց :

Ժողովը թեր ու դէմ վիճարանութիւններէ յետոյ նկատողութեան առաւ յիշեալին պահանջը, և որոշեց յատուկ Մասնախումբ մը կազմելով այդ խնդիրը սկիզբէն ց'վերջ վերաքննել : Կը լսենք թէ՛ Տիար Մարգիս Էփտահար՝ իր կողմէն վերաքննիչ Մասնախումբին անգամ պիտի առաջարկէ եղբր Արշալոյսի Տնօրէն Տիար Եղիշէ Թորոսեանը :

Յետոյ սկսան ընտրութիւնները : Գահիրէի ընտրութիւնէր 113 էն 99, որ ըսել է թէ՛ 50 քուէ ստացողները ապստամբ քուէով ընտրուած պիտի ըլլային :

Քուէհամարը տեղի ունեցաւ օրինակելի կարգապահութեան մէջ և քուէից բացարձակ առաւելութեամբ ընտրուեցան, Տիարք՝

Անդրէաս Տէր Անդրէասեան 77

Յարութիւն Աշրգեան 76

Իսկ համեմատականի մնաց հինգ անդամներու ընտրութիւնը, և առաւելագոյն քուէ ստացողներէն երկու պատիկ ցանկ մը պատրաստուեցաւ, յառաջիկայ կիրակի անոնցմէ հինգ անգամ ընտրելու համար :

Համեմատականի մնացողները հետեւեալներն են քուէից առաւելութեան կարգով. Տիարք՝

Օ. Գարալանեան 48 քուէ

Կ. Ալթունեան 45 »

Գ. Տամկանեան 41 »

Յ. Եղիշեան 39 »

Մ. Ճիվանեան 38 »

Յ. Կուսուղեան 37 »

Պ. Գասպեան 34 »

Յ. Գիւրգենեան 30 »

Էնֆիլէճեան 29 »

Նիքոթեան 27 »

Ատենադպրոց փակուեցաւ կէս օրէ յետոյ ժամը 3 ին մօտ, յառաջիկայ կիրակի վերստին գումարուելու որոշուով :

ԱՌԱՋՆՈՐԴ

Կէս պաշտօնական ազգերէ կը տեղեկանանք թէ՛ Պատ. Գաղաք. Ժողովը Տէր Թորգոմ Եպիս. Գուշակեանը հրաւիրած է առժամանակեայ կերպով Եպիստոսի առաջնորդական աթոռը բազմելու համար :

Տ. Թորգոմ Եպիս. եթէ այս հրաւերը ընդունի, տարակոյս չի մնար որ Եպիստոսի Առաջնորդութիւնը առժամանակեայ և խզմտօրէն վարելը ինչ դժուարին գործ ըլլալուն վրայ տակաւին գաղափար չունի :

Թո՛ղ գայ ու աչքերովը տեսնայ : Բարի՛, հազմը բարի . . .

Ն Ա Մ Ա Կ Գ Ա Հ Ի Ր Է Է Ն

ՀԱՅ ԱԶԳ. ՍՐԱՀԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

— 0 —

Սրահի վարչութեան կողմանէ ան- շուշտ՝ Տ. Ե. Ա. Բաշալեան կը պա- տասխանէր ինձ իմ մէկ այն հարցումիս, զոր ըրած էի Հայ. Կղզային Սրահի Վարչութեան կազմակերպած պարահան- ղէսի մասին «Յուսարեբ»-ի անցեալ թի- ւերէն մէկուն մէջ:

Իմ հարցումս իրենցմէ յայտարա- բութեան ձեւով բան մը սպասել չէր, ատկեայ լաւ կըլար եթէ նախապէս ը- նէր իր դիմաց որոշապէս ճշգրտ ըլլալու համար բացառիկ պարագաներու առթի- իր անդամներու հանդէպ: Իմ հարցու- մըս, իրենցմէ կը փնտռէր բարոյական այն համարատուութիւնը որուն մէջ վար- չութիւնը՝ բացարձակապէս կը թերա- նար, ուղղակի իր սկզբունքին այսինքն հաւասարութեան սկզբունքին դէմ եր- թալով:

Պարելու, կամ գիծակաւորուելու մարմաջը չէր, որ այս բացատրութիւ- նը պահանջելու առիթը տուաւ. անիկա պարզապէս խախտուած սկզբունքի մը առաջըր առնելու մատնանշուած մըն էր որուն մէջ վարչութիւնը, կամայ ակամայ կը մխրձուէր, եւ որուն կարգադրութիւ- նը, բարելաւուած կրնար հաւասարա- պէս հաստատութեան օգտին ծառայել:

Վարչութիւնը ոչ մէկ առնելու եւ ոչ մէկ տեղ իր այս քմահաճ կարգադրու- թիւններուն մասին զեկուցում մը ըրած էր իր անդամներուն, ըլլա՛յ ան հրա- պարակաւ կամ նամակաւ: Ուրախ եմ որ իմ այս դիտողութեան պարագան վար- չութիւնը իր կեցուածքին մէջ արտա- յայտեց որոշապէս բացառիկ կամ ոչ ե- րեկոյթներու մասին: Եւ որուն կը պա- տասխանեմ թէ ինչո՞ւ համար վարչու- թիւնը միմիայն արատաւոր երեկոյթ- ներու առթիւ «ճեռու մնացած անձեր» հրաւիրելու փութկոտութիւնը կուենայ եւ ոչ սովորականներու: Եթէ երբէք սովորականները, այնքան անխնամ բա- ներ են, որ ամէն մարդու երես չ'հան- ուիր, այդ պարագային ինչո՞ւ վարչու- թիւնը կասկածի տակ կը ձգէ իր հեղի- նակութիւնը ճաշակի եւ ընտրողութեան որոնց մասին ձեռնհաս ըլլալը անվիճելի պայման է:

Յետոյ վարչութիւնը կըսէ թէ «200 անդամներու յանձնարարեալ նամակ ղըր- կելու աւելորդ ծախս կը պատճառէ եւն»։ Կեալ յանձնարարեալ նամակ ըսուածին պէտքը չկայ, պարզ երեք միլիմետր նա- մակները իրենց նախընթացներով ասի- կայ կ'ապացուցանեն, կը բաւէ որ, տոմսերու պարագային պահարանը գոց ըլլայ: Անդամներու սովորական երե- կոյթներու համար ձրի մուտքը մէկ միլ- լիմետր հրաւիրագրով կըլլայ որ կընէ 200 անդամի վրայ 20 ղրշ. եզ. այս ծախ- սը իր փոխարինութիւնը չունի եւ բնա- կանաբար հաստատութիւնը պէտքէ տու- ժէ: Անդին սակայն արտասովոր երե- կոյթներու համար եղած փոսթի ծախ- սը, որ երեք միլիմետր 60 ղրշ. կընէ, այսինքն սովորականէն 40 ղրշ. աւելի եւ որուն փոխարէն վարչութիւնը որոշ- ուած մուտք մը կը զանձէ հաւասարա- պէս, անդամէն ալ, ոչ անդամէն ալ, անա այս պարագային է որ վարչութեան ջիղերը թուեց կեղծէ, եւ սնտուկը կը մտաբերուի:

Ցայգատօնը, որ այնքան յաջող կերպով անցաւ, վերի օրինակը չ'մարմ- նացներ իր մէջ: Հակառակ վարչու- թեան իր պատասխանագրի մէջ ըրած առարկութիւններուն, անիկայ պատկա- ռելի մէկ ապացոյցն է երեք միլիմետր նամակնիւր մէջ ամփոփուած տոմսերու եւ յայտագրիներու, որու արդիւնքը

ոչ թէ «աւելորդ ծախս» մը բացաւ վար- չութեան սնտուկին այլ ընդհակառակը, նիւթապէս եւ բարոյապէս աւելի նպաս- տաւորուեցաւ:

«Սրահ»ի վարչութեան աս կերպ պատեհապաշտութիւնը չէ, որ հիմնար- կութեան մը յարատեւութիւնը պիտի ա- պահովէ, սկզբունք մը ունենալը նա- խընարիլ է բոլոր զարտողութիւններէն գործերու տեւականացման տեսակէտով եւ որուն այնքան կարկառուն մէկ ապա- ցոյցը տուաւ տիրակաճորէն, Սրահի յար- գելի Հիմնագիրը, Տիար Պ. Յովսէփեան Արդեօք չ'արժե՛ր որան որ անդրադարձու- մէն օգտուի «Սրահ»ի վարչութիւնը:

ՆՇԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՅՕՐՕ ԷԿԼՕՆ

ՇԱՐԱ ՊԵՅՆ ԵՒ ՆԷՀՏԷՅՆ

Փալաքիի վաճառատան դիմաց Բարթ Բոստալ Լուսանկարներուն տուգինան 10 ղրուշէն:

Ե Ա Պ Է Լ Է Ծ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

— 0 —

Գահիրէ, Թ. — Խճճճճճ Նիւթ կը պակսի կը կարծենք: «Արշալոյս»-ի հրա- տարակամ որոշ օրին համար, պէտք էր դիմել վերջնութեան երեք թիւերուն, ո- րոնց մակտար նշանակուած է թէ՛ «Կը հրատարակուի Չորեքշաբթի օրերը»:

Մինչդեռ սկզբնական չորս թիւե- րուն ճակատը գրուած էր, «Կը հրատա- րակուի շաբաթը մէկ անգամ»:

Այսչափ փոքր զանազանութիւն մը — գրուած մը — չի կարենալ հասկնալը, արդէն քննադատելու՝ չի կրկնելու հա- մար՝ խճճճճ, իրաւունքէն կը զրկէ զձեզ, քանի որ՝ այդ պարզ երկտող- րուն իմաստը չըսենք չփոխելու՝ բայց չի հասկնալու չափ անհոգ գտնուած էք:

Այս կարգադրութիւնը ըրած էինք, մեր ուժերը չափելու համար թէ՛ այն պարագային երբ յանկարծ հիւանդութեան եւ այլ պատճառներով աշխատուոր պակ- սի, կրնանք առանց արտաքին օժան- ղակութեան թերթը որոշալ օրերը հրա- տարակել: Փորձը՝ աւելորդ է ըսել իր բոլոր անպատեհութիւններով, բարեյա- շող արդիւնք տուաւ:

Մենք քանիցս փորձած ենք որ՝ մարդեր կան՝ որոնք մեր քով եղող պաշ- տօնեաններուն անմիջապէս գործ տալու եւ նոյն իսկ բացառիկ կերպով վարձա- րելու հիւանդութիւնը ունին, մեր գոր- ծը աւելու թաքուն եւ անարդարանալի գիտաւորութիւններով, Բայց այդպիսի- ներուն հետ մենք պիտի տեսնուինք ա- ւելի ուշ. . . :

ԴԷՍ ՈՒ ԴԷՆ

ՈՍԿԻ ԵՒ ԱՂԱՄԱՆԻ

Շնորհաց թուականին չեմ գիտեր քանիներորդն էր: Փրանսայի մէջ մարդ մը՝ ազամանդ չիւնելու պատրուակին տակ քանի մը միլիոն ֆրանկ չորթած էր ինձի պէս քարեմիս մէկէն, որ շուտով մը հա- ըըստանալու քարեմաւորները կը սածէ ե- ղիր . . . :

Հարկ կայ ըսել թէ՛ ազամանդաչն միլիոնատէրը, դասական քիչ մը հետա- պընդուեմներէ յետոյ, կերթայ իր ճար- տարամտութեան արդիւնքը վայելել ու- ըրէ ինչի մը վրայ, ուր՝ հաւատացած է թէ՛ կարելի է հանդարտ սրտով ուտել, խմել եւ պակիլ . . . քննալ պէտք է հասկնալ պակիլը՝ եւ ո՛չ ուրիշ բան . . . մտքերնիդ չի ծոխ, որովհետեւ պէտք է գիտնալ թէ՛ մինչեւ քանի մը միլիոն ֆրանկը չորթելու յաջողիլը, մեր պառ-

կելու . . . սահմանուած մարդը՝ գիշեր թէ ցորեկ աչքը բաց կը քնանար. . . :

Կեանքը այսչափ դժուարութիւններ ունի իր մէջ. կարելի՞ է դէպքերը մեր կամքին հպատակեցնել: Եղածը եղած է ուրեմն:

Հիւսայ եւ յաւանութիւնը ունի իմ ընթերցողներու խոշոր ծառայութիւն մը մասուցանելու գիտաւորութեամբ, աւելի դիւրին բայց քիչ մը սուղ միջոց մը սորվեցնել ազամանդաչնութեան:

Սակայն ի՞նչ կարեւորութիւն ունի ըլլալիք ծախքը, քանի որ ետքը անոր հարեւարապատիկը արդիւնք պիտի քաղ- ուի, ո՛չ ապաքէն «Տօրու կիրակիներէն օն ելի կեղեկ» կ'ըսէ թուրքական ա- սակը . . . :

Տեսէ՛ք, ի՞նչ ա — շա — փարսախիկ չիւնուած է ազամանդաչնութեան նոր միջոցը:

Ահաւասիկ գեղագիրը. Խղճմտանք — 0 կրամ Անամօթութիւն — 110 » Էլիքսիր անիրա- լու թեանց — 75 » Թեկրիւր գողութեան — 550 » Փախելու փոշի — ըստ կամս:

Եթէ այս տարազին համեմատ ալ չի կարենաք աղաւանդ պատրաստել, գո՛նէ կարելի է յաջողի ոսկի պատրաս- տելու . . . Եթէ երկար ժամանակ քիա- րան մնալու դժբաղդութեան առջեւ ա- ռած ըլլաք. . . Ձեր անիրաւ շահերուն մէկ մասը երկրորդական կամ երրորդա- կան քրտուներու գրպանը սահեցնելով, որովհետեւ ամենուն գիտցած բանն է թէ՛ հազուադէպ ապուշներն են որ թի- արան կերթան . . . :

Ձեզի կը հաւաստեմ թէ՛ հազարա- ւոր մարդիկ կան որ իմ ցոյց տուած դե- ղագրով միայն ազամանդ կը պատրաս- տեն . . . Սա՛ տարբերութեամբ միայն որ՝ այս վերջինները համեստ մարդիկ են, եւ փոխանակ ինքզինքնին ԳՈՂ անուա- նելու, գործի մարդ կը յորջորջեն . . . :

ՄԵՐՍԷՏԵՍ

Գ Ո Ց Ն Ա Մ Ա Կ

Ն. Վ. Պօղոս փաշա ընդունելու- թեան Մասնախումբին, որ կազմուած է եղեր Մեծ. Տիարք Բ. Մաարաֆէ Կ. պէյ Շէրիտեանէ, Մ. Ղազարոսեանէ, Տօք. Սերոբեանէ, Կարօ Պալեանէ եւ Կ. Քէչեանէ:

— 0 —

Պարոններ,

Հայրենիդ ուրանալու չափ ապե- րախ գտնուած էք, երբ, Ն. Վ. Պօ- ղոս փաշային ներկայանալու համար Ձեր զրկած հրաւիրագրներու շարքին մէջ գնել չէք ուզած Արշալոյսը, որ Ն. Վ. Բ. սեմութեան ներկայացողներուն շատերէն աւելի իրաւունք ունէր իր յատուկ տե- ղը ունենալու հոն:

Եւ գիտէ՛ք ինչու: Տակաւին այդ ներկայացող պարոններդ Պօղոս փաշան ու անոր սիրտն ու հոգին չի ճանչցած, այս տղերքը գրողը հասկցած էր ու գը- նահատած, 1900ին հրատարակելով ա- նոր լուսանկարը (Տես Արշալոյս թիւ 161) Բարթիֆի Իտալական փոխ — Հիւպատո- սին մէկ նամակին պատասխանելու հա- մար . . . :

Կերելի թէ՛ մասնաւոր նպատակ- ներ, եւ միակողմանի գործելակերպն է որ ձեզի շուտակցուցած է ուղիղ գիծէն շեղելու համար, ինչպէս հիմայ շատե- րուն համար սովորական դարձած է . . . :

Բայց Թանքանայի պէտք չկայ, ե- թէ «Արշալոյս» պէտքը ունենայ Ն. Վ. Բ. սեմութեան հետ տեսակցիլ, կ'ապահով- ցընէ ձեզ թէ՛ կրնայ՝ առանց ձեր մի- ճամտութեան եւ առանց ձեւակաւու-

թիւններու Ե Ան՝ Փաշան՝ ալեւս ժողո- վուրդին մարդն է . . . :

Յայտնի բան է որ տակաւին հաս- կըցուած չէ քանակին եւ որակին առա- ւելութիւնները . . . :

ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

(Անհասակալ)

Մեծայարգ Տիար Աւետիք Լալաւանցիին ի Գահիրէ

Երկ երեկոյեան ճաւրու վրայ մեր մեկ վայրիեանի հանդիպումը եւ երկու խօսքերու փոխանակումը մեծ վիշտով լեցուց զիս եւ անմոռ գիշեր մը անցուցի . . . քիտաւոր խոկումներու քոն ու քո- հին մէջ քաղաւած . . . :

Ձեր հարցումները հետաքրքիր (inté- ressant) էին եւ առ այդ պէտք կը տեսնեմ ընկերակալ ասեան մը պահանջելու, իմ ձեռնարկներու եւ արդարագուցներու ա- նոնց անցել պարզելու համար, ու իմ կողմէ իրաւարար կը նշանակեմ Տիար Սարգիս Պիլիպիանէ, Տօք. Մ. Շաւրք- եան եւ Գեորգ Պերպրեան որոնք՝ բացի Տիար Պիլիպիանէն, մօտէն չիտու ու- նին Ձեր հարցի որած խնդրոյն հետ:

Հաճեցիք, խնդրեմ, մնացեալը ազ- նուարար Ձեր կողմէ կարգադրել յանուն արդարութեան եւ ուղղաւարտեան, ի նը- կասի ունեւարտի մասնաւոր որ՝ ստորա- գրեալս ասիկ աւելի ժաւանակ կարող չեմ տրամադրել նախօրինակ խնդրեմներու հա- մար:

Սիրալիր քարեկներով եւ յարգանքով ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

ՍՊՐՈՑ ԽՕՍԷՅԸ

Նուարդիկ

Կուրծիդ վրայ յուխս նուներ՝ Աղուոր աղուոր եւ նուներ Ձոյց մը աստղեր կամարին Կայսրուսալանց, կը վառին:

Գարեան վարդի հոսաւէօ, Անկէ աչ ֆեմուշ քեպէօ, Անուշ անուշ կը հոսին, Թուրքիան երբ ֆու գօսին:

Կուրծիդ վրայ վարմարե՛ Տասրակն ուր յոկ կը պարե՛, Կը հաստանան ու կուռին, Դարեան ինչպէս է ուռին:

Բեզ պաշտօնիկ է խորան, Ուր գիտց նուներդ երեւան, Աջսանակներ ոսկեգօծ Բիլիսիկ ուրկից՝ կրակ, բոց: Ո՛չ մանիչակ, ո՛չ մեխակ Կազմե՛ր կրեան անոնց հակ, Անգիկ ֆարեւ անոնք եւ, Որք քիտ արեւ կը հարեւ:

Յեզն ասուին՝ հոնաւ, բաց, Կաւ քուրդերուն վարդիկ ցած, Սոխակն երբոր կը քառի, Կերգէ ճայնով կիրառի: Ու եւ աչ երբ ա՛խ, Նուարդ, Այնքս յանեմ ֆու վրայ, Հարսա՛ս՝ ուր սիւսս ուռի, Յայտի կրակ, բոց հուրի:

Բուրձերդ նարի՛կ երբ խաղան, Մոտիդ վրայ ալեկո՛ծ . . . Հոն ֆեզ սիրոյ կէֆ օղան, Կաւ եկուր դուռ կաւ եւ զաւ, Գորեւե՛ր գիւրար մի անգամ, Թող մեզ դիտող յար այն Եւսիսանձին, Ան՝ եւնի կաւայն:

Մարմարակերտ քերտովդ Ինկիւր վզիս ծծեմ եւ՝ Շուռնոյ անուշ, ինչան ֆուլդ Ձի պաշտօնի հրեշտակ մ՛ եւ: Կարիչ մը կար քո՛ղ խեւե՛ Սոխիկներդ այդ աղու, Պաղտաւիֆիս՝ հեզ սղու, Ա՛խ, մի՛ մեծեր կը խնդրեմ:

ԿԱՐԱՊԵՏ Պ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

Բօնապոլսոցայ

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք

ՊԱՎԱԳԻ ՓՈՂՈՑ ԼԱԻԿԻՆ ՓԱՍՔԱԼ

Վ. Ա. ՋԱՆՈՒՍՏԱՆ ԿԻՑ

ԵՂԱՆԱԿԻՆ ԵՄՐԱՐԱՍԵՆ ՏԵՍԱԿ ԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍԱԾ ԵՆ ՓՈՒԹԱՑԻՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պօլսոյ ամենածանօթ թիփինի Տան Գահիրէի նորահաստատ Մանանճիւղն է .

ԲՐԷՏԻ ՖՕՆՍԻՅԷ ԷԺԻՐՈՒԷՆ
16 Փետրուար 1914
1886ինը 361րդ . վիճակահանութիւն

Ա. ՊԱՐԳԵՒ
Թիփ 325, 515 կը շահի՝ 50,000 Յրանգ
Հետեւեալ 25 թիւերը կը շահին 1000 Յր.
14085 43206 79374 91711 94500
107956 116390 117161 122180
130022 142507 149198 152333
162805 167996 170342 193121
206050 221512 244919 258972
259535 296370 399949 335158

Բ. ՍԷՌԻ
130րդ. վիճակահանութիւն
Ա. պարգև 474, 773 50,000 Յր.
Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Յր.
419097 420730 427469 429517 443271
448843 492710 512193 529796 547950
549640 585054 587864 588675 593931
604593 618853 635906 646564 676391
677843 682136 703992 733012 745722

Գ. ՍԷՌԻ
39րդ. վիճակահանութիւն
Ա. պարգև 128776 կը շահի 50,000 Յր.
Թիփ 257, 399 կը շահի 10,000 Յր.
Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Յր.
18023 20016 62672 94045 105478
106336 111191 121922 126804 157748
184248 185256 248326 263755 264930
289078 290092 343363 345289 353115
372246 376101 391660 394874

ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂՔԱՍԱԿՆԱՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ

230 դ թիւով .
Գահիրէ, 8 Մարտ 1914
Առաջին պարգև

Թիւ	5588	Դր. Ողջ	4000
"	7929	"	400
"	9579	"	200
"	2464	"	100
"	13044	"	"
"	10898	"	"
"	1614	"	"
"	8008	"	"
"	12957	"	"

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 70 ա-
կան զրուշ .

274	350	1162	1978	2763	2879
3051	3154	3428	4282	5094	5726
6014	6349	7056	7215	7265	7438
7794	8025	8112	8664	9219	9274
10134	10456	10517	10757	10773	
11355	11505	12222	12301	12393	
12952	13055	13871	15257		
15478	15825				

ՏՊԱՐԱՆ

Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանը՝ Արտանայ եգիպտական կառավարութեան ներքին Գործոց նախարարութեան, անկանաւած խնամով կը տպագրէ .

1. — Արտանայ Օրաքերքեր, Հանդէսներ, Պրոջիւրներ, Պարբերականներ եւ մանաւանդ Գիրքեր .
2. — Վաճառականական տետրեր՝ եւ գրասենեակի ամեն տեսակ տպագրական պիտոյքներ՝ ամեն շնորհով .
3. — Յայտարարութիւններ, շրջաբերականներ, Ամսականոյններ, Ընդարձակներ, եւ այլն .
4. — Հարսանեկան տուներ, մահազոյներ եւ այլն .

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանին հասցեն է, ց'նոր սեօրիւնութիւն . Եւրա Մուհամմէտ Սի, Սիբասեյ երկարող քրասնկէյի գծին վրայ, Հարթ - Էյ Մասսայէկ - Էյ Գասիլէ, թիւ 40, Տիար Միհաս Շիբիւնեանի յարկա-րածնին մէջ .

THE «SINGER» MANUFACTURING Co

ՍԻՆԿԵՐԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շարա-էլ-Մըրապի Տալիզ Պրայնի սեփականութեանը մէջ .

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐԸՆԿԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է .

400 Ե անչի վկայական եւ մեքայներով վարձատրուած, Եւրախառնայ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՍ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահայտիչի մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՆ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ,
ուշադրութիւն դարձնել
իւրաքանչիւր մեքենայի
վրայ ՍԻՆԿԵՐԻ ներկա
յառնանքիմ



Չրի դասեր և նորոգու-
թիւններ, յաճախորդաց
սուսերուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հինքու-
յւ նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

Գին ՉԱՓ . . .

ԱՇԽԱՐՀԻ ՎՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

ՃԱՇՏԱՐԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՋԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19

ԱՒԵՏԻՍ ՊՅՅԱՃԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ-
րաստուին Եւրոպական եւ Արեւել-
եան ընտիր կերակուրներ . պան-
դուխտ երիտասարդները եթէ ան-
գամ մը այցելեն մեծապէս գոհ
պիտի մնան յատկապէս զինքերէն և
սպասակութենէն . 14

Ի, Ա, ԵՐԱՆ

Հրատարակութիւններ

ԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ ԱՄԷՆԻՆ ԱԼ

Բառարան հայերէն-անգլիերէն ասու	50
Բառարան անգլիերէն-հայերէն »	75
Հայ անգլ. եւ անգլ. հայ միասին տպ.	1 -
Պատ. գրուցարարութիւն. հայ. անգլ. »	1 50
Գործնական անոնքարանութիւն »	1 50
Սեռային անոնքարանութիւն »	1 25
Գործն. եւ սեռ. անոնք. միասին »	2 -
Ժողովրդային երգարան »	2 -
Երգարան եւ սեռ. անոնք. միասին »	3 -
Երգ. եւ գործն. անոնք. միասին »	3 -

Հասցէ՝ E. A. YERAN
P. O. BOX 84, Sta. A.
Cambridge, Mass.

ՄԵՐ ՀԱՎԱՔԱԾՕՆԵՐԸ

Ոմանք մեզմէ ներկայ չըլանի
Ա. թիւէն սկսեալ հաւաքածօներ
կուզեն . Ասոնք ունենալու համար
պէտք է գիմել ո՛չ թէ Արշալոյսի
տպարանը, այլ՝ Հօթել Տ'Արմէնի, ո-
րուն դռնապանը պիտի գոհացը-
նէ զերենք .

Արշալոյսը ձեռքէ զնել ու-
ղղներն ալ կրնան միևնոյն տեղը
գիմել .

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՉԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Շարա Ապտ Էլ Ալիզ
Ապտինի Գարագոյին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գոսթիւն մ-
տեննալու համար զանազան տեղեր զի-
մած ու դժգոհ մնացած են, թող ան-
գամ մը մեր վաճառատունը այցելեն .
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր-
ուելու՝ եթէ իրենց յանձնարարութիւնը
նը գոհացուցիչ չ'գտնեն, կանխավճարը
ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հազ-
ուելու փոխադրուելուն համար, նը-
պատաստուր առիթ մը պիտի ըլլայ .
Ապտինի պատրաստութեանը նկատու-
ղութեան շին առնուելու, եւ անոնք որ
ինձի կը դիմեն, դիւրան կրնան ըմբու-
նել ապտինիին տարբերութիւնները,
թէ գործի մաքրութեան եւ թէ գի-
տերուն մասին .
1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ .
ԱՂՔԱՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Եգիպտոս)

Շարաթական կանոնաւոր երթեւեկ .
Միացեալ Նահանգներու, Բա-
նատայի եւ Հարաւային Ամերիկա-
յի համար .

Գաղթականներու համար չափա-
ւոր գին .

Աչքի քննութիւնը ճիշտապէս
կը կատարուի տեղույս մէջ,
Մանրահասակ տեղեկութեանց
համար զիմել Գործակալութեան .
ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ
Հեռագրական Հասցէ — ԼԵՆՕՔՕ
Փոսթարկի թիւ 897
Թուրքիոյ գաւառներու մէջ
փոխ - գործակալներ կը փնտտուին

Արտանայի ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Անկական Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ